ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4618-Ա « 13 » նոյեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ, ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ ՊՈՂՈՏԱ Հ.7/27
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՄՈՒՐԱԴ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մուրադ Խաչատուրի Մուրադյանի (ծնված 26.10.1951թ.) դիմումները:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 04.05.2023թ. հ.ԱՏ-04052023-01-0681, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 11.10.2023թ. հ.13441 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 29.10.2025թ. հ.20-Էլ-Դ-31655-23 եզրակացությունը, համաձայն որի Երևանի Կենտրոն, Ծովակալ Իսակովի պողոտա հ.7/27 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1.Վերականգնել Երևանի Կենտրոն, Ծովակալ Իսակովի պողոտա հ.7/27 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Մուրադ Խաչատուրի Մուրադյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 259.56քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 259.56քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ Երևանի

Կենտրոն, Ծովակալ Իսակովի պողոտա հ.7/27 հասցեում գտնվող 259.56քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Երևան, Կենտրոն, Նորագյուղ թաղամաս հ.139 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Երևան, Կենտրոն, Ծովակալ Իսակովի պողոտա հ.7/27»:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ